

**Հարգելի պարոն Երիցյան.**

Ի պատասխան Ձեր 07.12.2020թ. գրության՝ տեղեկացվում է, որ Երևան համայնքի 2021թ. բյուջեով՝ Երևանյան լճի հիմնախնդիրների լուծման նպատակով, նախատեսվել է 6,000.0 հազ. դրամ:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Երևան համայնքի 2020թ. բյուջեով նման ծրագիր նախատեսված չի եղել:

2020թ. ընթացքում ուսումնասիրվել և վեր են հանվել Երևանյան լճի և Հրազդանի կիրճի հիմնախնդիրները՝ մշակելով «Հրազդան գետի և Երևանյան լճի մաքրման բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնությունները և դրանց ֆինանսական համամասնությունները» ծրագրի նախագիծ: Այն նախատեսվում է իրականացնել համաձայն «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» 2001թ. մայիսի 15-ի օրենքի՝ Երևան համայնքում գործող արտադրական ձեռնարկությունների հետևանքով շրջակա, այդ թվում՝ օդային ավազան վնասակար արտանետման նյութերի և միացությունների արտանետման համար բնապահպանական վճարներից համայնքին հատկացված մասհանումների միջոցներով: Նախագիծը, համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 26-ի հ.1544-Ն որոշման, ուղարկվել է կարծիքների ՀՀ առողջապահության, շրջակա միջավայրի և էկոնոմիկայի նախարարություններ, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ և ստացել դրական կարծիքներ: Համաձայն օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերի, 2021թ. նախատեսվում է նախագիծը ներկայացնել Երևանի ավազանու հաստատմանը, որից հետո այն կներկայացվի պետական ֆինանսավորման և կիրականացվի:

Տեղեկացվում է նաև, որ բնապահպանության վարչության կողմից 2021թ. բյուջեով 6 մլն դրամ գումարի չափով նախատեսվել է իրականացնել «Երևանյան լճի և Հրազդան գետի առափնյա տարածքներում ճահճային բույսերի ոչնչացում» ծրագիրը, որն ուղարկվել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն՝ մասնագիտական քննարկման և կարծիքի տրամադրման նպատակով: Նախագծի վերաբերյալ դրական կարծիքի առկայության պարագայում, ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար, 2021թ. կհայտարարվի մրցույթ:

«Ջրային կառույցներ» ՓԲԸ-ի կողմից 2020թ. իրականացվել է Երևանյան ջրամբարի ջրարգելակների շուրջօրյա շահագործման և սպասարկման աշխատանքներ: Մշտապես պահպանվել է լճի մակարդակի նիշը վարարումների և ոռոգման սեզոնների պահանջներին՝ համապատասխան, իսկ ջրի բացթողումներն իրականացվել են Հրազդան գետով դեպի ջրամբար՝ մուտքային հոսքերի հաշվարկից ելնելով: 2020թ. ընկերության կողմից կատարվել է ջրամբարի պատվարի մոտ կուտակված ավիամերձ տարածքներից բերված լողացող աղբի մաքրման աշխատանքներ՝ կիրառելով համապատասխան մեքենա-մեխանիզմ: Տարվա ընթացքում ընդհանուր առմամբ հավաքվել է մոտ 70մ<sup>3</sup> աղբ:

Միաժամանակ տեղեկացվում է, որ «Ջրային կառույցներ» ՓԲԸ-ն իր գործառույթների շրջանակում իրականացնում է միայն լճի մակերեսի վրա լողացող և պատվարի մոտ կուտակվող աղբի մաքրում: